

ԼՈՆՏՈՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ) - Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյր Երկուշաբթի օր (այսօր) կը մեկնի Մոսկուա, ուր Երեքշաբթի օր տեսակցութիւն մը պիտի ունենայ նախագահ Վլադիմիր Փութինի հետ: Կ'ակնկալուի, որ անոնք արծարծեն յատկապէս կորիպային զէնքերու կրճատման հարցը:

Արեւմուտքի ղեկավարներուն մէջ Պլեյր ամէնէն աւելի տրամադրութիւն ցուցաբերած է Փութինի ձեռք երկարելու, հակառակ Չեչենիոյ մէջ անոր պիտուորական արշաւին եւ մարդկային իրաւանց այլ հարցերու գծով արտայայտուած ստահոգութիւններուն:

Փութին անցեալ շաբաթ յայտնած էր, թէ Ռուսիա պատրաստ է կորիպային գրուիները աւելի եւս նուազեցնելու, քան իւրաքանչիւր կողմին համար ճշդութիւնով 1500 գրուիները:

Երկու ղեկավարները պիտի քննարկեն նաեւ տնտեսական յարաբերութեանց հարցը:

## ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՌԻԱՏԵՆ ՄԵԿԵՆՑԱՒ ԼԻՊԻԱ, ԻՍԿ ԱՅՍՕՐ Կ՝ՈՒՂՂՈՒԻ ԳԵՊԻ ՄԱՐՈՔ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի Շարաթ օր սկսաւ արարական երկիրներ շրջապտոյտի մը: Առաջին հերթին ան ուղղուեցաւ դէպի Մէնուտական Արարիա, ուր մայրաքաղաք Ռիատի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Մէնուտական Արարիոյ Ֆահատ Պըն Ապտէլ Ազիզ թագաւորին հետ:

Հանդիպումին ներկայ գտնուեցան Մէնուտական Արարիոյ արտաքին գործոց նախարար Մէնուտ Ֆահատ իշխանը, գաղտնի սպասարկութեանց պետ Մէնուտ Պըն Ֆահատ Ապտէլ Ազիզ, նախարար Ապտէլ Ազիզ Պըն Ֆահատ իշխանը, արքայական դիւանի պետ Մոհամէտ Նուալ-սէր, Ֆահատ թագաւորին յատուկ խորհրդականը՝ Իպրահիմ Անքարի, նաեւ հանգիստներու վարչութեան պետ Ապտէլ Ազիզ Մանէհ եւ այլ պաշտօնատարներ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկկողմանի յարաբերութիւններն ու արարական եւ միջազգային բեմերու զարգացումները:

Վարչապետ Հարիրի Ռիատ ժամանած է Շարաթ կէսօրին, ուր դիմաւորուած էր պետական նախարար Ապտէլ Ազիզ Պըն Մանէհի եւ Լիբանանի դեսպանին կողմէ:

Ժամանումին ետք, վարչապետը տեսակցեցաւ փոխ վարչապետ Սուլթան Պըն Ապտէլ Ազիզ իշխանին հետ, որ դատապարտեց Լիբանանի ուղղուած իսրայէլեան սպառնալիքները: «Շատոնց յայտնի է, թէ Իսրայէլի յայտարարութիւնները խեղկատակութիւններ են: Լիբանան խաղաղութեան եւ սիրոյ երկիր է եւ որեւէ ատեն նախադրուած չէ եղած: Մէնուտական Արարիա Լիբանանի հետ էր անոր անկախութենէն առաջ իսկ, եւ միշտ պիտի մնայ անոր կողքին», ըսաւ ան:

Վարչապետ Հարիրի Շարաթ յետմիջօրէին տեսակցեցաւ Մէնուտական Արարիոյ գահաժողովի իշխան Ապտալլա Պըն Ապտէլ Ազիզ իշխանին հետ:

Մէնուտական աղբիւրները յայտնեցին, որ Հարիրի Ապտալլա իշխանին ներկայացուցած է Լիբանանի վիճակն ու ներդրումներու կարիքը:

Հարիրի ընկերակցող լիբանանեան պատուիրակույթեան անդամներէն քայքայելի իրենց տեղեկութիւնները, լիբանանեան լրատուական աղբիւրներ հաղորդեցին, թէ վարչապետը սէնուտիցի գահաժողովին հետ քննարկած է կարելիութիւնը 500 միլիոն տոլարի սէնուտական գումար մը իր մօտ երեք տարի պահ ձգելու կարելիութեամբ մը:

Շար.՝ էջ 10

## ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐՈՒՆ ԵՒ ԻՍՐԱՅԷԼԱՑԻՆԵՐՈՒՆ ՄԻՋԵՒ ԲԱՆՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ. ԶՈՐԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ 240Ի



Պաղեստինցի ցուցարարներ կը փոխադրեն իրենց վիրաւոր մէկ ընկերը:

Իսրայէլացի բարձրաստիճան զինուորական մը երէկ յայտնեց, որ պաղեստինցիները յառաջիմուկութիւն արձանագրած են՝ ենթարկուելով Եսսէր Արաֆատի հրահանգներուն: Արաֆատ Ուրաթ օր հրահանգած էր պաղեստինցիներուն՝ իսրայէլացիներու դէմ կրակ չբանալ ամբողջութեամբ պաղեստինեան հակազիւրին ենթակայ շրջաններէն: Պաղեստինցի պաշտօնատարները յայտնեցին, որ մէկ փամփուռ իսկ չէ արձակուած Ուրաթ գիշերը:

Զօրավար Եսսէր թով Սամիա, որ հրամանատարն է կազմի մէջ գործող իսրայէլեան ուժերուն, ըսաւ, որ անցնող երկու օրուան ընթացքին ազդանշանները ցոյց կու տան, որ պաղեստինեան ոստիկանութիւնը աշխատանք կը տանի դարձեցնելու համար կազմին եւ Այսրիսրայէլեան ռազմաւորներու դէմ: Սամիա աւելցցուց, որ այս ընթացքով կարելի է նախատեսել, որ կրակոցը վերջնականապէս դադարի յառաջիկայ օրերուն:

Իսրայէլացի այլ պաշտօնատարները ըսին, որ իսրայէլեան զինուորական մը երէկ յայտնեց, որ պաղեստինցիները յառաջիմուկութիւն արձանագրած են՝ ենթարկուելով Եսսէր Արաֆատի հրահանգներուն: Արաֆատ Ուրաթ օր հրահանգած էր պաղեստինցիներուն՝ իսրայէլացիներու դէմ կրակ չբանալ ամբողջութեամբ պաղեստինեան հակազիւրին ենթակայ շրջաններէն: Պաղեստինցի պաշտօնատարները յայտնեցին, որ մէկ փամփուռ իսկ չէ արձակուած Ուրաթ գիշերը:

ուժերու այլ պատասխանատու մը՝ Եսսէր Նաւէ, վարչապետ Իհուս Պարաթի ապահովութեան հարցերու խորհրդատու Տանի Եսսէր ըսաւ, որ Արաֆատի յայտարարութեան արդիւնքը արժեւորելու համար տակաւին կանուխ է: Ան աւելցուց, որ Իսրայէլի համար գործերն են կարեւորը եւ ոչ թէ խօստինեան հակազիւրին ենթակայ շրջաններէն: Պաղեստինցի պաշտօնատարները ըսին, որ մէկ փամփուռ իսկ չէ արձակուած Ուրաթ գիշերը:

Կազմի իսրայէլեան

Շար.՝ էջ 10

## ԱՄՄԱՆԻ ՄԻՋ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ԴԻՒԱՆԱԳԻՏ ՄԸ ՓՐԿՈՒԵՑԱԻ ՄԱՀԱՓՈՐՁԷ

ԱՄՄԱՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ) - Զորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ վիրատուեցաւ իսրայէլացի դիւանագետ մը, որուն վրայ կրակ բացած էր պիսիայ մը, յայտնեցին յորդանանցի եւ իսրայէլացի պաշտօնատարներ Կիրակի օր:

Գործողութեան պատասխանատուութիւնը ստանձնեցին յորդանանեան պաշտարի իսրայէլական ընդդիմութեան շարժումն ու Սիւննի Տարաբուս մարտիկին անուանով գործող խմբակ մը: Երկուքն այլ ցարդ անծանօթ շարժումներ են: Անոնց հրապարակած յայտարարութիւնները տակաւին չեն ստուգուած: Երկու յայտարարութիւններն այլ կը

Շար.՝ էջ 10

## ԿՈՉ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Եթէ հնարաւոր ըլլար, «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի Լիբանանի Յանձնաժողովը անձնապէս կամ նամակով պիտի դիմէ իւրաքանչիւր լիբանանահայուն, յիշեցնելով իր բարոյական պարտաւորութիւնն ու պատասխանատուութիւնը հայրենաշինութեան գործին հանդէպ:

Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000ին, Հիմնադրամի կողմէ կազմակերպուած դրամահաւաքի արշաւին համար, կարելի մեր միջոցներով դիմած ենք ազգայիններուն, սակայն մեզի կը պակսին անհրաժեշտ հասցէներ հասնելու բոլորին, այդ իսկ պատճառով. Յանձնաժողով կրկին անգամ հրապարակաւ կը դիմէ իւրաքանչիւր լիբանանահայուն, ազգային գիտակցութեամբ մասնակցելու դրամահաւաքի այս արշաւին, որպէսզի Արցախի Հիւսիս - Հարաւ Ընդհատուած Մասի կառուցապատման մէջ լիբանանահայութեան մասնակցութեան բաժինը ըլլայ ակներեւ, եւ «Աղետի Գօտի»ին մէջ հնարաւոր դառնայ ամբողջացնել ծրագրուած վերակառուցման աշխատանք մը:

Առ այդ, կոչ կ'ուղղենք լիբանանահայութեան, որ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000ին, Երեկոյան ժամը 6:00էն 10:00 հետաձայնով կապ հաստատէ հետեւեալ թիւերէն որեւէ մէկուն. եւ կատարէ իր խոստումը, եւ իմացընէ թէ ինչպէս կրնայ գումար փոխանցել Յանձնաժողովին:

Հեռաձայն՝		
01-565719	01-443547	01-565628
03-652557	03-643815	03-617046
03-678248	03-221970	

Նաեւ՝ Հինգշաբթի, Ուրբաթ եւ Շաբաթ օրերը, 23, 24 եւ 25 Նոյեմբեր 2000ին, անձնապէս կարելի է հանդիպիլ հետեւեալ կեդրոնները, եւ փոխան պաշտօնական ստացագիր կատարել նուիրատուութիւնը:

- 1) Մերձաւոր Արեւելքի եւ Հայ Արեւ. Եկեղեցիներու Կեդրոն, Մար Մըխայէլ, օթոպիւսի կայանին դիմաց:
- 2) Համապայիսի գրախանութ. Շաղպուտան Կեդրոն, «Ալդակ» շէֆ:
- 3) Տեմիրձեան Կեդրոն, Նազգաշ:

Կոչը իւրաքանչիւր լիբանանահայուն ուղղուած է:

«ՀԱՅԱՍՏԱՆ»  
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀՐԱՄԱՊԱՐԱՄԻ  
ԼԻԲԱՆԱՆԻ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԼԱՆՈՒԹԵԱՆ ԾԱՆԱՉՈՒՄ

### ԻՏԱԼԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՅԱՐ ԵՒ ՆՄԱՆ Է ԵՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԲԱՆԱՁԵՒՆ

Շարաթ օրուան մեր թիւով հաղորդած էինք, որ Իտալիոյ խորհրդարանը 17 Նոյեմբերին ճանչցաւ Հայկական Յեղասպանութիւնը:

Բաց թուեցաւ իտալացի խորհրդարանի ղեկավար Վալտեր Վալտերի կողմէ: Բանաձեւին զօրավիզ կանգնած են նոյն կուսակցութիւնը, անոր անդամ երեսփոխան կուսակցութիւնը, Ազգային Միութիւնը, Հիւսիսային Լիկա, Բրիտանոնեայ Դեմոկրատ եւ Ընկերակցական կուսակցութիւնները: Համայնավար կուսակցութիւնը ներկայացուցած է աւելի խիստ ոճով բանաձեւ մը, որ սակայն չէ ընդունուած:

Շար.՝ էջ 9

## ԹՈՒՐՔԻԱ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՈՒՐԱՅՄԱՆ ԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Թուրքիոյ ընկերակցական կառավարութեան մաս կազմող կուսակցութիւններու ղեկավարները յայտնեցին, որ Եւրոպական խորհրդարանին կողմէ Հայկական Յեղասպանութեան գծով պահանջները կարելի չէ լուրջի առնել: Անոնք նշեցին, որ այդ հիմնարկը իրաւունք չունի կոչ ուղղելու Թուրքիոյ խորհրդարանին եւ կառավարութեան:

Վարչապետ Պիլէթիք Էմրէտ, փոխ վարչապետներ Տեւէթ Պաշչելի, Մեսուք Ելլըմազ եւ Հուսամէստին Օզքան շուրջ Երկուքուրեկէս ժամ տեսած հանդիպումին ետք հրապարակեցին այս մասին միացեալ յայտարարութիւն մը:

Միւս կողմէ, Թուրքիոյ պետական նախարար Երեբրէ Սինա Կիլիշ յայտնեց, որ «մենք ոչ մէկ ոճի կամ սխալ գործած ենք, որ ուզենք ծածուկ պահել պատմութիւնը: Մենք ժողովուրդ մը չենք, որ մարդկութեան դէմ ոճի գործած է»:

Կիլիշ ըսաւ, որ «կարգ մը մարդիկ, որոնք կը գործակցէին թշնամիին հետ, տեղափոխութեան ենթարկուեցան եւ անոնցմէ ոմանք բնական պայմաններու պատճառով չարաբուեցան»:

Թուրքիոյ խորհրդարանի նախագահ Օմէր Իզճի յայտնեց, որ Հայկական Յեղասպանութեան մասին Եւրոպական խորհրդարանի բանաձեւը քաղաքական է եւ անկարելի է, որ Թուրքիա ընդունի զայն:

Միւս կողմէ, Թուրքիոյ արտաքին գործոց նախարար-

Շար.՝ էջ 10

## ՌՈՒՍԻՈՅ ՊԱՏՐԻԱՐԿԻՆ ՄԻՋՆՈՐՈՒԹԵԱՆ

### ԳԱՐԵԳԻՆ Բ. - ՓԱՇԱՉԱՏԷ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ 29 ՆՈՅԵՄԲԵՐԻՆ

Ռուսիոյ Ալեքսէյ Բ. պատրիարքին միջնորդութեամբ, 29 Նոյեմբերին Մոսկուայի մէջ տեղի պիտի ունենայ հանդիպում մը՝ Հայաստանի եւ Ազգայնական հոգեւոր պետերուն միջեւ:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի եւ Ազգայնական հոգեւոր պետերուն միջեւ հանդիպումը տեղի պիտի ունենայ ռուս պատրիարքին նստավայրին մէջ: «Հանդիպումին նպատակն է գտնել միջոցներ՝ յաղթահարելու համար երկու ժողովուրդներու միջեւ ստեղծուած թշնամութիւնները», ըսաւ Ալեքսէյ Բ.:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ ՀԱԿԱՌԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՒԹԵՐԸ ՊԱՏՐԱՍՏ ԵՆ ՀԱԿԱԴԱՐՁԵԼՈՒ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ

ԿՐՍԷ ԶՕՐ. ԸՈՒՆՈՒՔՈՎ

Ռուսիոյ օդուծի հրամանատար գոր. Անաթոլի Զոննոպով յայտնեց, որ Հայաստանի եւ Ռուսիոյ հակաօդային պաշտպանութեան ուժերը պատրաստ են հակադարձելու թշնամիներու յարձակումներուն:

Զոննոպով ըսաւ, որ Գիւմրի հաստատուած ռուսական 18 «Միկ 29» օդանաւերը եւ «ԷՍ. 300» հակաօդային իրաւորներու զօրաբաժինը կը գործեն Անկախ Պետութիւններու Հասարակապետութեան հակաօդային պաշտպանութեան համակարգի ծիրէն ներս: Ան ըսաւ, որ Հայաստանի իրաւորները վրայ հաստատուած ռուս տարները կը գնան հսկել Հայաստանի հարաւային շրջաններուն վրայ, ծածկելով ՕժԷՆԻ հարաւային ամբողջ կողմը:

Զոննոպով ըսաւ, որ մտահոգիչ միակ հարցը այն է, որ օդաչուները բաւարար չափով թռչքներ չեն կատարել: Ան ըսաւ, որ վառարանի հարցը կը մնայ անյոյժ: Զոննոպով յայտնեց, որ վառարանի Գիւմրի կը փոխադրուի ռուսական «Իլ-76» օդանաւերու միջոցով, սակայն կարգ մը պարագաներու հայկական կողմը վառարանի փոխարինումը ռուսական օդանաւերու:

(ՌՈՅԹԸՐԸ)



# ՍՈՒՐԻԱ ՍԿՍԱԻ ԱԶԱՏ ԱՐՉԱԿԵԼ ՆԵՐՈՒՄ ՍՏԱՅԱԾ 600 ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ՍԱԶՁԵԻ ԲԱՆՏԸ ԿԸ ՓԱԿՈՒԻ

ԴԱՄԱՍԿՈՍ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)։— Սուրիա սկսած է պատերազմային ներուժ ստացած քաղաքական վեց հարիւր բանտարկեալները: Բարձրատիման պաշտօնատարներ եւ պաշտօնակազմի աղբիւրներ յայտնեցին, որ նախագահ Պաշշար Ասատի հրամանագիրով Հիւզարթի օր ներուժ ստացած բանտարկեալները սկսած են դուրս գալ բանտերէն: Օրական յիսունէն հարիւր բանտարկեալ պատ կ'արձակուի:

Պաշտօնական աղբիւրներու համաձայն, պատերազմային ներուժ կարգին են իսլամականներ եւ համայնավարներ. որոնք իշխող կուսակցութեան ընդդիմադիրներ են:

Քաղաքական այլ աղբիւրներ հաղորդած էին նաեւ, որ պատերազմային ներուժ կարգին պիտի ըլլան լիբանանցիներ ալ: Մինչեւ Կիրակի օր սակայն տակաւին չէր հաստատուած անոնց արձակման լուրը: Լիբանանեան ընդդիմադիր շարժումներու համաձայն, մտատրուպէս 150 լիբանանցի քաղաքական բանտարկեալ կալ Սուրիոյ բանտերուն մէջ:

Միւս կողմէ, ըստ լիբանանեան պատկերասփիւռի կայաններու. Դամասկոսի մօտ գտնուող Մալպէի «հռչակաւոր» բանտը պիտի փակուի, նախագահ Պաշշար Ասատի որոշումով: Բանտը պիտի վերածուի մշակութային եւ գիտական կեդրոնի:

## ՓՈՒԹԻՆ – ՆԱԶԱՐ ՊԱԵԻ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՆ



Փութին եւ Նազարպաեւ

Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարպաեւ եւ անոր ուսուցիչ Վլադիմիր Փութին Շարաթ օր Մոսկուայի մէջ տեսակցութիւն մը ունեցած են, քննարկելու համար շրջանային ապահովութեան եւ նախկին խորհրդային հանրապետութեան միջեւ տնտեսական համարկումի հարցերը:

Ռուսիա եւ Կեդրոնական Ասիոյ անոր խորհրդային նախկին արտաներահանքերու ղեկավարները ապահովութեան մարզին կապուած մտահոգութիւններ կը բաժնեն, յատկապէս Աֆղանիստանէն արժատական խաւովութեան ղէպի հիւսիս տարածման գծով:

Նազարպաեւ ըսած է, թէ Փութինի գեկուցած է Փաշինտանի զինուորական ղեկավար զօրավար Փերովէզ Մուշարրաֆի եւ Սէնտական Արարիոյ փոխ վարչապետ Սուլթան իշխանին հետ իր վերջին տեսակցութիւններուն մասին:

Այդ տեսակցութիւններէն ետք, Ղազախստան աւելի հաշտարար արտադրութիւններ ունեցած էր Աֆղանիստանի իշխող թախանի շարժումին հանդէպ:

Ռուսիա խոր մտահոգութիւն արտադրած է թախանիներու ձեռք բերած հողային շահերուն գծով: Անիկա առաջարկած է օժանդակել շրջանային մէջ նախկին խորհրդային երկիրներուն՝ ըմբոստներու եւ թմրեցուցիչի մաքաննցութեան ղէմ պայքարելու համար:

Նազարպաեւ, որ Բրիտանիայ այցելութենէ մը ետք Մոսկուա կանգ առած էր, յայտնած է, թէ ինք եւ Փութին համաձայնած են Ա. Պ. Հասարակապետութեան զարկ տալ:

(ՌՈՅԹԸՐԸ)

## ՓԵՐՈՒ ՅՈՒԹԻՍՈՐԻ ԱՅՍՕՐ ՊԻՏԻ ՀՐԱԺԱՐԻ ԿՐ ՅԱՅՏՆԵ ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱԼԱՍ

ԼԻՄԱ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)։— Փերուի նախագահ Ալպերթո Յուսէֆի, որ ձափոն կը գտնուի, Երկուշաբթի օր (այսօր) պիտի հրաժարի, յայտնեց վարչապետ Յետերի-բօ Սալաս Կիրակի օր: Ան հաւանական նկատեց, որ Յուսէֆի յարկաւոր իր փոխանորդ Ռիքարտո Մարքէզով եւ մինչեւ Ալպերթի ընտրութիւնները՝ փոխանցման կառավարութիւն մը գլխավորէ:

Գաղանի սպասարկութեանց նախկին պատասխանատու Վլադիմիր Մոնթեանի կապուած կաշառակերութեան գայթակղութեան մը յայտնաբերումէն ետք, Յուսէֆի Մեպտեմբերին արդէն յայտարարած էր, թէ իր 5 տարուան նորազոյն նստաշրջանը պիտի կրճատէ մէկ տարիի եւ կանխահաս ընտրութիւններէ ետք, Յուսէֆին պիտի հրաժարի:

# ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԲԱՆ ՍԸ ՉԷ, ՈՐ ՊԻՏԻ ԸՆԴՈՒՆԻՆԵՔ ՈՐԵՒԷ ԳԻՆ ԿՃԱՐԵԼՈՎ ԱՆՈՐ ԸԱՄԱՐ

ԿԸ ԳՐԷ «ՍԱՊԱԿ»

ԱՆԳԱՐԱ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)։— Թուրքիոյ դաշնակցութեան հետեւեալ աւելի թափ կը ստանայ տեսնելիք, որ Երոպական Միութեան անդամակցելու իր ճիգերը կը կապուին Յուսէֆի հետ սահմանային հարցերու լուծման:

«Ասիկա չափազանց շատ է», ըսած է «Սապակ» օրաթերթը Կիրակի օր, Ե. Միութեան ընդարձակման հարցերու յանձնակատար Կուսթըր Վերհէօլդի թուրքիա այցելութենէն օր մը առաջ:

«Մեր համբերութիւնը հատած է», ըսած է «Միլիթ» առաջին էջի վրայ յօդուածով մը:

Վարչապետ Պիւլէնթ Էնելիտ Շարաթ օր զգուշացուցած էր, թէ Թուրքիա Միութեան հետ յարաբերութիւնները վերստեստեցնելու կրնայ ենթարկել, եթէ պիտի Կիրակի եւ Եգէական ծովուն մէջ սահմանային հարցերը

անոր անդամակցութեան պայմաններուն մէջ պահէ: Էնելիտի կառավարութեան անդամ, յաճախ ըսուած ունեցող ազգայնականները անոր զօրավեց կը կանգնին նշեալ հարցով:

Ե. Միութիւնը այս ամսուան սկիզբը Թուրքիոյ ներկայացուցած էր բարեկարգումներու ծրագիր մը, գոր Անգարա պէտք է իրականացնէ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելէ առաջ:

Անոր գլխաւոր պահանջներէն մէկը այն էր, թէ Անգարա պէտք է ուժեղ կերպով զօրավեց կանգնի Կիրակի հարցին լուծում մը գտնելու ՄԱԿի ճիգերուն:

Պահանջողական փոխ վարչապետ Մետուք Ելլուզ, որ պատասխանատու է Երոպայի հետ կապուած, յայտնած է, թէ Թուրքիայի անդամակցութեան պայմանները ճշգրտօրէն քննարկուած են:

Ինչ որ անդամակցութեան պայմանները քննարկուած են, որ պիտի ընդունինք որեւէ զին վճարելով անոր համար», ըսած է ան, «Սապակ» օրաթերթին:

«Հիւրիւրիլէթ» թերթը մէջըբերած է ծայրայեղ ազգայնական փոխ վարչապետ Տելլէթ Պահչեօլլու, որ ըսած է, թէ Թուրքիա Երոպական Միութեան հետ «ողորմութիւն» է խնդրած:

Անոնք կը խօսէին Երոպական խորհուրդի արտաքին գործոց նախարարներու Երկուշաբթի օրուան (այսօր) ժողովին նախօրեակին՝ վաւերացնելու համար թեկնածու երկրին համար անդամակցութեան պայմանները ճշգրտօրէն քննարկուած են:

## ՅՈՒՆԱՍՏԱՆ

# ՎԱՐՉԱ ՊԵՏ ՄԻՄԻԹԻՍ ՊԱՇՏՕՆԱԶՐԿԵՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԸ

ԱԹԵՆ, 19 (ՌՈՅԹԸՐԸ)։— Յունաստանի վարչապետ Էուսթա Միմիթիս Կիրակի օր երկրորդ անգամ ըլլալով վաշտօնազրկեց իր ամեն մի վիճելի քաղաքական անձնաւորութիւններէն՝ մշակոյթի նախարար Թուրոպոս Փանկալոսը, կառավարութեան քննադատած ըլլալու յանցանքով:

«Նախարար մը չի կրնար հրապարակաւ կառավարութեան հետ վիճել, իր գործակիցներուն հանդէպ վարկաբեկիչ ամականեր գործածել, կամ տարակարծիք ըլլալ անոնց հետ ու յիրաժամուրդով արդիւնաւորութեան մը մէջ: Փանկալոս, որ 1999ի սկիզբը Միմիթիսի կողմէ արդէն վաշտօնազրկուած էր քիւրտ ըմբոստողական Կարակալ Սալտիլլա Օմալանին ապստամբութեան ղեկավարութեան պատճառով, Կիրակի օր յայտնած է, թէ կառավարութիւնը աշխատատեղակայ եւ արտաքին հարցեր սխալ ձեւով կը տնօրինէ:

«Էթնոս» թերթին մէջ լոյս տեսած հարցազրոյցին մէջ, Փանկալոս ըսած է, թէ Թուրքիոյ հանդէպ յունական քաղաքական

նուրիւն արդիւնաւոր չէ: Արտաքին գործոց նախարար Եուսթ Փափանուրուի մասին ան ըսած է. «Ունիմ այն տպաւորութիւնը, որ եթէ մէկը կ'ուզէ արտաքին քաղաքականութեամբ զբաղուիլ, ան պատմութեան մասին ցոյց տալու պիտի յարկաւորուի»:

Փանկալոս քննարկատու Թուրքիոյ հետ յարաբերութիւնները քարտաշարելու Յունաստանի ճիգերը: Երկու երկիրներու յարաբերութեան մէջ նորազոյն ձեւաւորման համար փափանքով կը պարտի:

## ՎՐԱՍՏԱՆ

# ԵԼԵԿՏՐՈՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԸ ԿԸ ԽՈՒՎԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէ, Շարաթ օր յայտնած է, թէ Ելեկտրոնային հոսանքի յաճախակի ընդհատումին ղէմ ժողովրդային զայրոյթը երկրին մէջ քառասուն վիճակ կրնայ ստեղծել:

Շեւարտնաձէ կառավարութեան արտաքին մէկ ժողովին նախագահած էր, ցուցարարներու կողմէ թիֆլիսի փողոցներուն փակումէն ետք (Ուրբաթ օր): Անոնք օրօպիւսներով պատնէշներ բարձրացուցած էին եւ անիւներ այրած:

Պաշտօնատարները յայտնեցին, թէ տարեց կին մը մահացած է, երբ հրէշներ չեն յաղողած անոր այրող տունը մարելու հասնել:

Տուններուն մեծամասնութիւնը օրական միայն քանի մը ժամ ելեկտրական հոսանք կը ստանայ, հակառակ Շեւարտնաձէի տարիներէ ի վեր կատարած խոստումներուն՝ ընդհատումներու հարցը լուծելու գծով:

1990ական թուականներու սկիզբներէն ի վեր, ձմեռան եղանակին զրեթէ շեւտուցիչ միջոց կամ տաք ջուր չէ եղած եւ շատ փոքր համեմատութեամբ կազ հալթալթուած է:

Նախարարներուն ուղղուած իր խօսքին մէջ, Շեւարտնաձէ խոստացած է թիֆլիսի մէջ ելեկտրական հոսանքի ընդհատումներուն լուծում մը գտնել 75 10 օրէն:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ԻՐԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ ԱՍԵՐԻԿԵԱՆ ՈՒԺԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ ԾՈՅԻ ՄԷՋ

Իրանի արտաքին գործոց նախարարութիւնը զատարես ամերիկեան ուժերու ներկայութիւնը Օտոմանի մէջ, դիտել տալով, որ շրջանի երկիրները աւելի լաւ ձեւով կրնան ամրապնդել ապահովութիւնը ու խաղաղութիւնը, եթէ առանձին ձգուին:

Նախարարութեան քննարկումները Բեհրէս Բեհրէսի, որ Միացեալ Նահանգներ իրաւունք չունի օգտագործելու «հարեկչութեան» սպառնալիքը, արդարացնելու համար իրենց ուժերու ներկայութիւնը Օտոմանի մէջ: Ասեֆի Կարապետեան յայտնեց, որ Օտոմանի կառավարութեան մասին խօսելու, երբ ինք կը պաշտպանէ սոցիալական պետութեան վարչապետութեան ղեկավարութեան նախարար Ռիւիլիմ Զոհէն յայտարարած էր, որ հարեկչութիւնը պիտի չկարենայ ամերիկեան ուժերը հե-

ռացնել Օտոմանի: Զոհէն, որ Կիրակի օր Զուէյթ այցելած էր, ըսաւ, որ Զուէյթ կը պաշտպանէ ամերիկեան ուժերը ահաբեկչական յարձակումներէն:

Զոհէն կը ուղղեց Զուէյթի, որ շարունակէ հիւրընկալել ամերիկեան օդանավերը, որոնք հսկողութեան թռիչքներ կը կատարեն Իրաքի հարաւային գոտիին վերեւ:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ԵԳԻՊՏՈՍ 15 ԾԱՅՐԱՅԵՂԱԿԱՆՆԵՐ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ, ՈՐՈՆՑՄԷ ՄԷԿԸ՝ ԵՐԵՍՓՈՒՄԱՆ ՆՈՒԱՅ



Մըխթար Նուահ

Եգիպտոսի զինուորական մէկ ատեանը բանտարկութեան դատապարտեց իսլամ Եղբայրներ արձատական շարժումին պատկանող 15 անդամներ: Բանտարկութեան վճարները հինգէն 15 տարուան միջեւ են:

Ատեանին նախագահող դատաւորը ըսաւ, որ ամբաստանեալները փորձած էին վերականգնել իսլամ Եղբայրներ արդիւնաւոր շարժումը: Անոնք փորձած են նաեւ թափանցել աշխատանքային զանազան համադրանակցութիւններու մէջ:

Ապահովութեան ուժերը աւելի քան քսան հոգի ձերբակալած էին Հոկտեմբեր 16ին: Զինուորական ատեանը ազատ արձակեց հինգ ամբաստանեալներ: Բանտարկութեան դատապարտուողներուն կարգին է Մըխթար Նուահ, որ երեսփոխան է եւ փաստաբաններու սենտիքայի անդամ:

Քաղաքական դէտեր կ'ըսեն, որ դատաւարութիւնը զգուշացումի հրահր է իսլամ Եղբայրներուն, որպէսզի հեռու մնան սենտիքայական ընտրութիւններէ: 1993էն ի վեր, կառավարութիւնը արգիլած է փաստաբաններու եւ ճարտարապետներու սենտիքայական ընտրութիւնները, որովհետեւ միջոցաւ իսլամականները տիրական ներկայութիւն եղած են հոն:

Եգիպտոսի երեսփոխանական ընտրութիւններուն իսլամ Եղբայրներու զօրակցութիւնը վայելող 17 թեկնածուներ խորհրդարան հասան:

(ՌՈՅԹԸՐԸ)

# ՌԻԱՏԻ ՄԷՋ ԱՒԱՐՏԵՑԱԻ ՔԱՐԻՒՂ ԱՐՏԱԴՐՈՂ ԵՒ ՍՊԱՌՈՂ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Սէնտակաւ Արաբիոյ մայրաքաղաք Ռիատի մէջ երէկ աւարտեցաւ ուժանիւթի խորհրդաժողովը, որ Ռիատ միջոցաւ պատրաստուած էր համապէս ՕՓԷՔի երկիրները՝ յաւելեալ քաւակութեամբ քարիւղ արտադրելու:

Խորհրդաժողովի աւարտին, Սէնտակաւ Արաբիոյ քարիւղի նախարար Սի Նալիմի յայտարարեց, որ Օտոմանի կառավարութիւնը կարողութիւն ունի 1,8 միլիոն տակաւ յաւելեալ քարիւղ արտադրելու:

Սէնտակաւ Արաբիոյ միջազգային շուկային վրայ կարիքը պահուի: Նալիմի շեշտեց, որ Ռիատ միջոցաւ պատրաստուած էր համապէս ՕՓԷՔի երկիրները՝ յաւելեալ քաւակութեամբ քարիւղ արտադրելու:

Սալիմի, որ կը խօսէր քարիւղ արտադրող եւ սպառող երկիրներու երկօրեայ խորհրդաժողովի աւարտին, դիտել տաւ, որ այս տարւան ընթացքին, ՕՓԷՔ չորս անգամ բարձրացուցած է արտադրութիւնը՝ նպատակելու համար քարիւղի սակերուն նուազումին: Ներկայիս քարիւղի միջազգային սակերը երեսուն տոնային սահմանէ վեր են: Աշխատանք կը տարուի սակերը երեսուն տոնային սահմանէ վար առնելու:

Սիւսեայ Նահանգներու ուժանիւթի նախարարը ըսաւ, որ Ռաշիդիլլա կը նախընտրէ սակերը 20-25 տոնային միջոցաւ պահել, մինչ ՕՓԷՔ 22-28 միջոցաւ պահելու համարին է:

(ՌՈՅԹԸՐԸ)

(ՌՈՅԹԸՐԸ)

# ՄԱՍՆԱԿՅԻՆԵ ԱՐՑԱՆԻ ԸԻԲՈՒՄ - ԸԱՐԱԻ ՃԱՆԱՊԱՐԸԻ ԿԱՌՈՒՅՈՒՄԻ ԸԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

# «ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ» Ի ՄԵՏԱԼ՝ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ

Նախագահ Թուրքիա Քոչարեան 16 Նոյեմբերին հրամանագիրներ ստորագրած է սփիւռքահայ բարերարներ Էտուարտո Սէֆերեանը եւ Արմէն Մեծատուրեանը «Մովսէս Խորենացի»ի մեծալոյզ պարգևատրելու մասին:

## ԴԻՒՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԶԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ ԵՐԿՕՐԵԱՅ ԽՈՐՀՐԴԱՔՈՂՈՎ՝ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՉ

17 Նոյեմբերին Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան մէջ իր աշխատանքներուն սկսաւ օտար պետութիւններուն մէջ Հայաստանի դեսպանութիւններուն, հիւպատոսութիւններուն եւ միջազգային ներկայացուցչութիւններուն ղեկավարներուն երկօրեայ խորհրդաժողովը, գոր կը վարէր արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանյանը: Խորհրդաժողովին մասնակցեցան նաեւ արտաքին գործոց փոխ նախարարները, յատուկ յանձնարարութիւններով ղեկավարները, վարչութեան պետերը եւ խորհրդականները:

Նախարար Վ. Օսկանյան իր խօսքին ընթացքին առանձնացուցած է արտաքին քաղաքականութեան հիմնական ուղղութիւնները: Ան կարեւորութեամբ շեշտած է չըջանի քաղաքական ու տնտեսական խնդիրներուն լուծման համար կայուն հիմքերու եւ անվտանգութեան համակարգի ստեղծումը, Լեւոնյանի Ղարաբաղի հարցին խաղաղ կարգաւորումը, չըջանի մէջ մարդու իրաւունքներուն եւ ազատութիւններուն տարածման ուղղումը: Վարդան Օսկանյանը նաեւ համարեց, որ Հայաստանի տնտեսական համագործակցութիւնը անմիջապէս ղրացիներուն եւ յարաբերութիւնները համաշխարհային ուժային կեդրոններուն հետ:

Խորհրդաժողովին մասնակցեցրը անդրադարձած են նաեւ ղարաբաղեան տագնապի վերջին ղարգացումներուն: Այնուհետեւ Հայաստանի դեսպաններն ու հիւպատոսները ներկայացուցին իրենց չըջաններուն մէջ առկայ հարցերը:

## ԵՐԵՒԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ Կ՝ԱՒԱՐՏԻ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՅՈՒՆԻՍԻՆ

Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շինարարութիւնը պիտի աւարտի յառաջիկայ տարուան Յունիսին՝ Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի տօնակատարութիւններէն առաջ:

Արդէն աւարտած են եկեղեցւոյ երկաթի եւ պեթոնի աշխատանքները, օժտած է հաստատուած են զանգակատան եւ երեք գմբէթներու խաչերը: Երեսպատման աշխատանքները կ'աւարտին մինչեւ տարեվերջ, իսկ ներքին յարդարումը՝ մինչեւ Յունիս:

Եկեղեցւոյ շինարարութիւնը, որուն համար մինչեւ օրս ծախսուած է 6 միլիոն տոլար, կ'իրականացուի «Նրեւալից» ընկերութեան կողմէ:

## ԴԱԻԹԱՇԷՆԻ ԿԱՄՈՒՐՉԸ ԿԸ ՍԿՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ



Դալիթաշենի կամուրջը:

Դալիթաշենի կամուրջը, որուն վրայ երթեւեկութիւնը պաշտօնագրային սկսաւ օգտագործելի 16 Նոյեմբերին, կառուցուած է անհամապատասխան օժանդակով, քան ինչ որ նախատեսուած էր: Այս մասին տեղեկութիւններ փոխանցեցին ճարտարապետ Սեմէոն Բաղդասարեան եւ «Կամուրջից» ընկերութեան տնօրէն Վլատ Ասատրեան 15 Նոյեմբերին կայացած մամուլային ասուլիսին ընթացքին: Կատարուած աշխատանքներուն եւ մասնագիտական հաշուարկներու զգալի ֆինանսական տարբերութիւնը ճարտարապետը եւ շինարարը բացատրեցին այն հանգամանքով, որ Խորհրդային Միութեան քայքայումէն ետք կամուրջին շինարարութեան անհրաժեշտ բազմաթիւ ենթակառուցներ եւ թեքիքը հանգուցներ ալյուս չեն ներածուի Ռուսիայէն, այլ ֆինանսական զգալի տնտեսումներով կը պատրաստուին Հայաստանի մէջ:

Կամուրջի փորձարկման խումբի ղեկավար, Երեւանի ճարտարապետաշինարարական համալսարանի կամուրջներու եւ ճանապարհներու ամպլոնի վարիչ Ալպէր Աւետիսեանի համաձայն, վերջերս տեղի ունեցած փորձարկումներուն արդիւնքները կը վկայեն, որ Երեւանի այս նոր կամուրջը ուղադրու է կարծրութեամբ եւ ամրութեամբ:

Կամուրջը Երեւանի կեդրոնէն կտրուած Դալիթաշեն կոչուող թաղամասը, ուր կը բնակին աւելի քան յիսուն հազար երեւանցիներ, պիտի միացնէ այդ կեդրոնին: Շինութիւնը ունի 500 մետր երկարութիւն, 32 մետր լայնութիւն, իսկ բարձրութիւնը 80 մետրէն աւելի է:

# ԱԼՊԵՐԹԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿԻ ՈՂՋԱԿԻԶՄԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄԻ ՕՐՈՒԱՆ ԱՆՈՒՆԸ

Քանաւոր Ալպերթա նահանգի կառավարութիւնը փոփոխութեան պիտի ենթարկէ Հրէական Ողջակիզումը՝ ճանչցող բանաձեւին անունը՝ ազգային կրօնական խմբաւորումներու կողմէ եղած այն զանգատներէն ետք, թէ երեւոյթը կ'անտեսէ այլ ցեղասպանութիւններուն զոհերը:

Առաջարկուած օրինագիծը, որ սկզբնապէս կը կոչուէր Ողջակիզման Յիշատակութիւն օր - Նոմ շա - Շոա էքթ (Երբայերէնը՝ Հրէական Ողջակիզումին), ներկայիս պիտի կոչուի Ողջակիզման Յիշատակ օր եւ Յիշատակութեան Յիշատակութեան Արարք: Երբայերէն Նոմ շա - Շոա բառերը բանաձեւէն դուրս բերելու որոշումը կը նպատակադրէր օրինագիծին մէջ այլ ժողովուրդներ եւս ներառելի:

Ողջակիզումը նշելու նահանգին որոշումին յայտարարութեան հետք, ուրբանայի եւ իմամ համայնքներուն ներկայացուցիչները բողոքած են, թէ Համաշխարհային Բ. Պատերազմի ընթացքին եւ անկէ ետք այլ ժողովուրդներ եւս ենթարկուած են ցեղասպանութեան: Նահանգին ազգային եւ կրօնական խմբակցութիւններէն շատեր, ներառեալ՝ Ուրբանական - քանաւորական Բոնկրէսը, յայտնած են, թէ իրենք բաւարարուած չեն անունի փոփոխութեան որոշումով: Ուրբանական - քանաւորական Բոնկրէսի Ալպերթա նահանգի բաժանմունքի փոխ նախագահ Մարք Լեւիցքի ըսած է, թէ ընդունելի չեն բանաձեւին վերանայի մէջ Ողջակիզումը՝ քան ներառելու եւ յիշատակի օրը երբայական լուսնային օրացոյցին համեմատ նշելու նահանգին որոշումները:

Այս տարի թուականը կը գուցադիպի 19 Ապրիլին: Լեւիցքի աւելցուցած է, թէ բանաձեւը պէտք է կոչուի Յիշատակութեան Յիշատակ օր եւ պէտք է նշուի չէ՛զոք թուականի մը: «Ժողովուրդներու հաւաքական ողբերգութիւնները հաւասար աչքով պէտք է դիտել», ըսած է ան՝ անդրադառնալով 1930ական թուականներուն Խորհրդային Միութեան կողմէ կուլակաթափութեան ընթացքին Ուրբանայի մէջ մահացած միլիոնաւոր մարդոց, Քամպուտիոյ շարդերուն եւ Հայկական Յիշատակութեան:

Նոյն կեցուածքը արտայայտած է նաեւ Քանաւորի մէջ իսլամական Գերագոյն Խորհուրդը, որ այս առնչութեամբ նամակ մը յղած է նահանգային վարչապետին:

## ՆՇԱՆ ՓԱՍՆՃԵԱՆ ԶԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒԹԵԱՆ 70ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ՝ ԿԼԵՆՏԷՅԼԻ ՄԷՉ

Ուրբաթ, 10 Նոյեմբերին, Կլենտէյլի մէջ շուրջ 300 աշակերտներու, ուսուցիչներու, շրջանաւարտներու եւ այլ հիւրերու ներկայութեամբ տեղի ունեցաւ Պէյրութի Նշան Փալանճեան ձեռնարանի հիմնադրութեան 70ամեակի նուիրուած ձեռնարկը:

Ձեռնարկը կազմակերպած էր Լուս Անճելուի «Համազգային» ձեռնարանականներու Ընկերակցութեան վարչութիւնը: Ներկայ էին նաեւ Մուշեղ եպօ. Մարտիրոսեան, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամ Բաբի Մանուկեան, Համազգայինի կեդրոնական եւ Շրջանային վարչութիւններու, ՀՕՄԻ Շրջանային վարչութեան եւ Հալէպի «Քարէն Եփէ» Ազգային ճեմարանի Լուս Անճելուի Ընկերակցութեան վարչութեան ներկայացուցիչները:

Բացման խօսքը արտասանեց ձեռնարանականներու Ընկերակցութեան վարչութեան ատենապետ Մհեր Պապեան, որ վեր առաւ ձեռնարանի ցարդ ունեցած դերը սփիւռքահայ մեր կեանքին մէջ: Ան անդրադարձաւ նաեւ հայ մտքի եւ հոգիի կրթութեան այս հաստատութեան հիմնադիր Լեւոն Շանթի եւ Նիկոլ Աղբալեանի տեղիներուն, ճիգերուն եւ սփիւռքահայ մեր կեանքի տարբեր ասպարէզներուն մէջ, անոնց փառանքողներուն արդար վաստակին: Ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց նուիրատուութեամբ օժանդակեցին ձեռնարանի երթին:

Ապա վարչութիւնը յատուկ զանգատագիրներ յանձնեց ձեռնարանի առաջին տարւոյն շրջանաւարտներին ուսուցիչ - ուսուցչուհիներուն՝ առ ի գնահատանք իրենց ծառայութեան:

Սօսք առաւ նաեւ առաջնորդ Մուշեղ եպօ. Մարտիրոսեան, որ զրուստեց Ն. Փալանճեան ձեռնարանի խաղացած դերը հայկական կրթական, մշակութային, ազգային եւ հասարակական կեանքին մէջ:

Այնուհետեւ ցուցադրուեցաւ տեսաերիզ մը ձեռնարանի գործունէութեան մասին: 1948ի շրջանաւարտներէն Յովհաննէս Մանուկեան (գրչանունով՝ Ալգաբազ) ընթացեց ձեռնարանի 70ամեակին նուիրուած իր բանաստեղծութիւնը: Ներկաներուն բաժնուցեց 70ամեակի առիթով հրատարակուած գրքոյկը, որ կը ներկայացնէ ձեռնարանի պատմութիւնը, ինչպէս նաեւ՝ ձեռնարանի տնօրէն Հրաչ Տասնապետեանի կողմէ Պէյրութ հրատարակուած 1999-2000 տարիներին տեղեկագիրը:

Տեղի ունեցաւ նաեւ նուիրատուութիւն, որուն ընդհանուր գումարը հասաւ 50 հազար տոլարի:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ԸՆԿԵՐԱՆ  
HAMPIG SASSOUNIAN C- 88440  
CSP - L.A.C. D-5- 232 44750  
60-TH ST. WEST LANCASTER,  
CA, 93536  
USA

# ՄԵՐ ԱՌՕՐԵԱՅԷՆ ԽԻՂՃԸ՝ ԼՈՒՌ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՆ

Ամբողջ կեանքը պատասխանատու թիւն մըն է, եւ մենք յանցաւոր ենք ոչ միայն մեր գործած չարքին համար, այլ նաեւ՝ բարիքին համար, գոր չենք կատարած:

Մարդ արարածին ներաշխարհին տիրապետող, զայն հաւասարակշռող ամենէն նուրբ եւ խոհանարան զգացումն է խիղճը: Մարդուն մտածումները Մարդուն, առաջնորդող, անոր շարժումները հաւասարակշռող գործօնն է խիղճը, առանց որուն տէր մարդը պիտի նմանէր անբան զագանի:

Եթէ վերցնենք Խիղճ հասկացողութիւնը, մարդուն հոգեմտաւոր հաւասարակշռութիւնը հունաւորող այս խորհրդատուն հարկ է արժեւորուի ըստ մարդկանական չափանիւնի, որովհետեւ առանց խիղճ - տրամաբանութեան, մարդը պիտի մոլորէր իր ընթացքին մէջ:

Խիղճը պէտք է ընդունել իր իրեն մարդուն անկեղծ ընկերը, խորհրդատուն, սրտակիցը եւ մանաւանդ՝ զգաստութեան հաւերողը: Մարդուն միտքը դէպի առողջ ճիշդ գտններ բացող դեկն է խիղճը, որուն հարկ է անսալ անպայման, ապա թէ ոչ գուրկ կը մնանք մարդկայնութենէ, հետեւաբար փուլ կու գայ մարդուն մարդեղէն կառոյցը՝ վերածուելով անհոգի գոյութեան մը:

Խնդը կ'անդրադառնանք խիղճ ըմբռնումին: Պարզապէս կ'ուզենք շեշտել, որ երբ հեռանանք խիղճին հսկողութենէն, երբ անտեսենք անոր իմաստուն եւ անսխալական թելադրանքները, կը զահաւիտանանք, ինչ զիբքի ու ասպարէզի ալ պատկանած ըլլանք:

Վերջին օրերուն (11 Նոյեմբեր 2000) պատահած երկու բազմաթիւ ու նորաշէն շէնքերու փլուզումը հետեւանքն է պարզապէս խիղճ զգացողութեան անտեսումին, քանի մը մարդ-արարածներու կողմէ, որոնք իրեն ճարտարապետութեան մէջ:

## «ԹԵԼԵԹՈՆ - 2000» - ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՌՈՒՍԱՄԱՐԱԹՈՆԻ ՄԱՍԻՆ

«Թելեթոն - 2000» մարդասիրական միջազգային զրամահաւաք մըն է, որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 23 Նոյեմբեր 2000ին, նպատակ ունենալով օգնել Ղարաբաղի մէջ Հիւսիս - Հարաւ ողնաշար մարդուղիի շինութեան եւ Գիւմրիի երկրաշարժի գոտիին մէջ չորս զպրոցներու կառուցման: Տասնմէկ ժամ տեւող այս միջազգային հաղորդումով «Թելեթոն»-ը շարունակ պիտի հետարձակուի իր մարդկութեամբ, Ամերիկայի Միացեալ զահանգներու բազմաթիւ քաղաքներուն մէջ, առաջին հինգ ժամը անմիջապէս պիտի սփռուի Հայաստանի, Եւրոպայի, ԱՊՂԻ երկիրներուն մէջ: «Թելեթոն - 2000» պիտի ունենայ նաեւ ուղիղ հաղորդում www.armenianradio.com-ի վրայ: Ինթըր-ՆԵՔ գործածողները զիւրուքեամբ կրնան հետեւել եւ մասնակցել զրամահաւաքին աշխարհի որեւէ մէկ անկիւնէն:

- Հայաստանի Ազգային Հեռատեսիլի Արբանակը պիտի հեռարձակէ հետեւեալ երկիրներուն մէջ իրենց տեղական ժամերով:
  - Հայաստան՝ երկուշաբթի ժամը 9:00էն մինչեւ առաւօտեան ժամը 2:00:
  - Մոսկուա, Ս. Փեթերսպուրկ, Ուրբանայ, Պիեթրոսիւրա, Ուզպեթիստան եւ Անգոլա՝ կէսօրէ ետք ժամը 5:00էն մինչեւ երկուշաբթի ժամը 10:00:
  - Ֆրանսա, Գերմանիա, Զուիցերիա, Պելճիքա, Գերմանիա, Ֆինլանդիա, Եթովպիա, Իտալիա՝ երկուշաբթի ժամը 6:00էն մինչեւ զիջերուան ժամը 11:00:
  - Յունաստան, Թուրքիա, Լիբանան, Կիպրոս, Քուէյթ, Յորդանան, Եգիպտոս, Արաբական Միացեալ Էմիրութիւններ՝ երկուշաբթի ժամը 7:00էն մինչեւ կէս ժամը 12:00:
- Միջազգային տարբեր երկիրներէ դիտողներ կրնան իրենց նուիրատուութիւնները կատարել հետեւեալ կայքէջով:
  - ԵՐԿՈՒՇԱՐԹԻ 0800-99-00-11-800-888-8897
  - Գերմանիա 0130-0010-800-888-8897
  - Զուիցերիա 0800-89-0011-800-888-8897
  - Պելճիքա 0-800-100-10-800-888-8897
  - Էթովպիա 0800-022-9111-800-888-8897
  - Ֆինլանդիա 0800-110-015-800-888-8897
  - Մոսկուա 020-7999-111-800-888-8897
  - Գերմանիա 8001-0010-800-888-8897
  - Իտալիա 72-1011-800-888-8897
  - Յունաստան 00-800-1311-800-888-8897
  - Թուրքիա 00-800-12277-800-888-8897
- ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ԵՒ ՄՈՑԻ ԵՐԿԻՐՆԵՐԻ ԿԻՔԱՆԵՐԻ ԿԻՔԱՆԵՐԻ ԿԻՔԱՆԵՐԻ  
Կիքանց 426-801-800-888-8897  
Կիպրոս 080-90010-800-888-8897  
Քուէթ 800-288-800-888-8897  
Յորդանան 18-800-000-800-888-8897  
